

ՕՐԱԳԻՐ ԱՌԺԱՄԱՅՆ

Ա Ա Զ Դ Մ Ա Ն Յ Մ Տ Ա Ց Ե Ի Ս Ր Տ Ի

1 8 4 2

Հ Ո Կ Տ Ն Մ Բ Ե Ր

2

Են որ իսկոյն քամեն զբաժակ կենաց,
և են որ ումպ առ ումպ:

10

Ճշմարիտ և կատարեալ զինուորութիւն՝
բովանդակէ զհանդէս կրօնաւորութեան և
մարտիրոսութեան:

11

Հոգի պայծառացեալ առաքինութեամբք,
նման է նաւու զամպարափայլ լուսաւորե-
լոյ ի նաւահանգստի:

13

Բարեկամն լիցի գերագոյն տերանց և
նուաստագոյն ի ծառայս:

13

Բարեգործ անհաւատ, կամ հաւատա-
ցեալ անգործ, նման է նաւու շանթահար
կայմի:

13

Գոհութիւն չափաւոր՝ առաւել քան ըզ-
կարծիս, նուազ քան զտենչ:

15

Որպէս թռչուն կալեալ զտոից ի զուր
թեւարախէ, այսպէս սիրտ արգելեալ:

17

Առաջին Եւայն յԱղամայ, երկրորդն
Աղամ յԵւայէ:

17

Մարիամ ամբարձաւ մարմնով որպէս
զՅիսուս, ապա ուրեմն անախտակիր էր
մարմինն միշտ:

17

Յիսուս մեռաւ ի լրումն պարտուց, Մա-
րիամ ի լրումն սիրոյ:

17

Որ կամաւոր մեռելութեամբ կեայ, առ
սակաւ սակաւ հատուցանէ զպարտս մա-
հու, և հանգստեամբ վախճանեսցի:

17

Հանգիստ ծուլաց տաժանելի գործ է:

17

Եկն Յիսուս իբրեւ մեղապարտ և ոչ
ծանեաւ աշխարհ, իսկ յորժամ գայցէ զնա
ինքն ցուցանել մեղաւոր՝ յայնժամ ծա-
նիցեն:

21

Հոգիք մեր ճառագայթք են հոգւոյն Աս-
տուծոյ:

21

Բան առանց հաւատոյ նման է պա-
տրուգի ծխելոյ:

22

Ի 1800 ամաց հետէ ի հաւածանս կայ
Յիսուս:

22

Եթէ ամենայն արիւն և արտօսք ան-
պարտ հեղեալք ոչ ծածկէին ի սիրտ եր-
կրի, այսօր յաղթք և հզօրք լինէին ամե-
նայն գետոց աշխարհի:

22

Իբրեւ ձեռն երկնառաք կնքէ մահ ի
ճակատս հողածնաց և մեռանին:

22-23 յերազի:

Il capo cadente... le braccia e i
piedi immobili... gli occhi due mon-
di di vanità.

23

Ձիք չարութիւն մեծ քան զտնկել ի
սիրտ անմեղ զխայթ խղի:

23-24 յերազի:

Մեծատունն, ասէ, աղքատանամ, զի
ոչ ևս լինիմ մեծատուն:

24

Մաղիկ սիրոյ յայտս վարդենիս, պը-
տուզ ի համբոյրն շրթանց:

24

Ձիք հզօր որպէս զկտակ՝ զի մուրհակ
է մահու:

25

Խօսք մարդկան հեղուկք հոսեալք ա-
ման յամանոյ ի սիրտս, է զի միաձոյլ
ընթանան, և է զի անխառն կան:

25

Ճանապարհորդի ամենայն ժամը անա-
գան են:

25

Մեռելութիւն ախտից՝ կամաւոր աը-
սոր ի կրից:

25

Միտք ի տան խորհրդոց իւրոց ընթա-
նան որպէս նժոյգ յանբաւ կրկիսի:

26

Ի շարժել ճրագի շրջին ստուերը գոյից,
և ի շարժել բազդի՝ փոփոխին յոյսը
մարդոյ:

26

Ձիւք ազնիւ քան զծաղիկ՝ այլ փշոյ
դրացի է, և առաքինութեանց մերձ կան
կիրք:

26

Ժողով առաքինեաց՝ բազմութիւն աշ-
խարհաց:

26

Քանիցս եկեալ մարդոյն յաշխարհ ըզ-
կեանս ծնողին անկայուն կենաց իւրեանց
գոհեցին:

26

Յոչնչէ գայ մարդ ի տապան կենդա-
նի, և յընչէն դառնայ ի տապան ան-
կենդան:

28

Համբաւ հասանէ ի սիրտ մերթ որպէս
զաղաւնի քաղցրաւաչ, մերթ որպէս անզգ
գիշատիչ:

28

Ի նմին շրթանց կաթեն մեղր և թոյն:

29

Ուրախութիւն՝ ճառագայթ ջինջ սրտի:

29

Որ զԱստուած սիրէ, սիրէ զամենայն,
որ զանձն սիրէ, սիրէ և ոչինչ:

29

Այլ է սիրտ խաչին սիրող, և այլ է
սիրտ համափոխեալ ի խաչ:

30

Համբերութիւն կանխաւ բառնայ զծան-
րութիւն գործոյն կիսով չափ:

30

Աչք՝ զոյգ կանթեղաց ջրով բուծելոց:

30

Եթէ լեզու զձե սայրասուր փքնի բերէ՝
ականջը վահան լիցին և ոչ խոցը:

31

Են միտք որ յոյս քաղաք կառուցա-
նեն, և սզգելոյ ճաննի միոյ ժոյժ ոչ
ունին:

31

Որ չունի ուստեք երկիւղ՝ յինքեան կրէ
զպաշտպանութիւն:

31

Ճշմարտութիւն հազիւ զմասն մի աշ-
խարհիս ճանաչէ, ցնորք մտաց աշխարհս
նորանորս ստեղծեն:

Հ. Ղ. ԱՍՇԱՆ

Շարայայտելի



Ս. ՂԱԶԱՐՈՒ ԶԵՌԱԳՐԱՏԱՆ

Ճ Գ . Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն Ի Ա Ռ Ի Թ Ո Վ

Այս չորրորդն է — 1888էն ի վեր Ե-
գիպտոսէն ղրկուած — մեր ազգային գեղ-
արուեստական այն թանկագին գանձե-
լէն, զոր յ19 Մայիս ներկայ տարւոյս
ընդունեցաւ Մայրավանացս Զեռագրա-
սունն իբր հաճոյական ընծայ Մուրա-
տեան վարժարանի նախկին սան, և այժմ
Նախարար Կրթութեան Եգիպտոսի, վսե-
մափայլ Եսփոյ Արդին փաշայեկ: Աւետա-
րանս է թղթեայ՝ բոլորգիր նոր, և ունի
30 մեծագիր նկարներ, 10 սիւնազարդ
խորաններ և 4 ալ կիսախորան. իսկ լու-
սանցազարդներն, զարդագիրք և մանրանը-
կարը շատ յաճախ, բոլորն ան բազմա-
գունեան են և ոսկեզարդ: Թէպէտեւ նը-
կարն չունին յամին 1903 յղած միւս
Աւետարանի նկարուց ներքութիւնն և կա-
տարելութիւնը, սակայն և այնպէս լի-
թը. դարու¹ հայկական նկարչութեան

1. Զեռագիրս մի միայն յիշատակարան ունի Գով-
հանուն աւետարանին վերջ — գրութեան տարբեր բո-
լոր գրով — ուր գրութեան մասին կայ հետեւեալն. «Եւ
սոյն այս տառս գրեալ ծաղկեցաւ և աւարտեցաւ ի քա-